ա/ միջոցներ, որոնք մատչելի են ամենքին,

բ/ միջոցներ, որոնք հասմարվել են միայն որոշ մարդկանց մենաշնորհը:

Տարբեր հիվանդությունների, պատուհասների ու անհաջողությունների դեմ պայքարելու և դրանցից ազատվելու միջոցների ընտրավարում պրոֆեսիոնալիզմը արտահայտվում է հատուկ ,,մասնագետ-միջնորդների,, հանդես գալով: Դրան մեծապես նպաստում են / բացի այդ մարդկանց՝ մյուսներին անսովոր թվացող անձնական շնորհից/ նաև անիրական/ոգիներ, սրբեր/ և իրական /մարդիկ/ աշխարհների միջև երևակայական կապի ժողովրդական պատկերացումները:

Սուրեն Հովսեպյան

ՁԻՔԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ՁԻՔԱՄԹԵՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

1. Ձիքատու բույսերի մշակությունը սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր դարի քսանական թվականները հայերի երկրագործական տնտեսության կարևորագույն ճյուղերից է եղել: Հայաստանում մշակվել են տարբեր ձիքատու բույսեր, որոնցից առավել տարածված են եղել կտավատը, սորեկը, քնջութը, կանեփը և հլածուկը:Դրանցից ստացվող ձեթը կիրառվել է տնտեսության ամենատարբեր բնագավառներում:

2. Ձիքատու բույսերի մշակման հիմնական նպատակը հատիկի ստացումն է եղել, որից էլ ձեթ են գտել: Հատիկից նաև որոշ տեսակի, առավելապես ծիսական կերակուրներ են պատրաստել:

ա/ Սննդի համակարգում, հատկապես ծիսական կերակուրների և թխվածքների մեջ, լայնորեն կիրառվել է կտավատի, քնջութի և սորեկի ձեթ:

բ/ Կտավատից, սորեկից, մանանեխից և այլ բույսերից ստացված ձեթը օգտագործվել է նաև տեխնիկական նպատակներով՝ ընակարանը լուսավորելու, ներկերի արտադրության, կաշվի մշակման, գոմեշներին ,,ձիթելու,, և այլնի համար, Արարատյան դաշտի որոշ գյուղերում ազկանեփի ձեթից նաև օճառ են պատրաստել:

գ/ Ձեթի դերը մեծ է եղել հատկապես ժողովրդական բժշկության ասպարեզում: Ամենաբարդ տիպի հիվանդություններ բուժելու համար օգտագործվել է կտավատի, ձիթապտղի և ազկանեփի ձեթ:

դ/ Բավականին մեծ քանակությամբ ձեթ է օգտագործվել նաև վանական տնտեսություններում՝ առօրյա սննդից բացի, մեռոն պատրաստելիս և մոմի փոխարեն այրելու համար:

3. Տնտեսական կենցաղում օգտագործվել են նաև ձիթատու բույսերի երկրորդական նյութերն ու թափոնները:

ա/ Դդմավատի, սորեկի, հլածուկի և կանեփի ցողունները ծառայել են որպես շենքերի ծածկի շինանյութ, որոշ շրջաններում՝ նաև վառելանյութ:

բ/ Հաճախ բերքահավաքից և կալսելուց հետո, հողը պարարտացնելու նպատակով ցողունները դաշտում փռեցրել կամ այրել են:

գ/ Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում ընդունված է եղել նաև կանեփի ցողուններից թելի ստացումը, որից պարաններ, որոշ շրջաններում նաև ձկնորսական ցանցեր են հյուսել:

դ/ Սորեկի մանրացված ցողունը որպես անասնակեր տվել են մանր եղջերավոր անասուններին, իսկ հատիկների զտումից առաջացած մնացորդը /քուսպ/՝ լծկան անասուններին:

4. Դաշտային ազգագրական նյութերը և անցյալ դարի հետազոտողների ուսումնասիրությունները հանգեցնում են այն հետևության, որ հայերի տնտեսական կենցաղում ձիթամթերքների նշանակությունը քավականին մեծ է եղել: Այս հարցերի հետագա ուսումնասիրությունը կնպաստի հայ ժողովրդի կենցաղում ձիթհանության և դրա հետ կապված մյուս հարցերի բացահայտմանը ազգագրորեն:

Լևոն Աբրահամյան

ՏԵՍՆԵԼՈՒ ՈՒ ՉՏԵՍՆԵԼՈՒ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՍՊԵԼՈՒՄ ԵՎ ԾԵՍՈՒՄ

1. Աշխարհի ստեղծումը պատկերող մի շարք դիցաբանական սյուժեների համաձայն առաջին մարդիկ ապրում էին խիստ նեղվածքի ու մթության մեջ: Հետագայում այդ վիճակը, որն ամենից լավ արտահայտում է սանսկրիտական *aṃhas* բառը / հմմտ. հայերենի ,,նեղ,, , ,,նեղանալ,, , ,,նեղսիրտ,, իմաստաբանական բառաշարքի հետ/, փոխվում է արդի իրավիճակին, որը օժտված է ,, լայն տարածությամբ,, / *uru loka* /: Հենց նոր վիճակում էլ ի հայտ է գալիս լույսը՝